



ՍՈՒՑԵՐՈՒ, ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]



Ահաւասի՛կ, Օսմանցի թուրքերուն բարբարոսութեան ապացոյցներէն մէկը՝ Սերպիոյ «NICH» քաղաքին մէջ մեռցուած սերպերու գանկերով՝ թուրքերուն կառուցած Աշտարակը:



1. La Tour des Crânes, d'après Xenu (Destin)

ՍՈՒՑԵՐՈՒ, ԵՐԱՋՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

ԳԱՆԿԵՐՈՒ ԱՇՏԱՐԱԿԸ

Մօտ անցեալին, վայրագ օսմանցի թուրքերուն մերօրեայ յաջորդները եղող սիոնիստ Արեւմուտքին «Gangster»ները, Սերպական Սուրբ երկիր եղող «Kosovo»ն ձեռք անցընելու համար, հերոս սերպ ժողովուրդին սպառնացին, և իրենց օդային ուժին գերազանցութեան ապաւինելով, ուզեցին քարուքանդ ընել Սերպիան:

Ճի՛շդ արիւնարբու Օսմանցի թուրքերուն պէս, որոնք, 1809-ին, պալքանեան ժողովուրդները սարսափեցնելու համար, Սերպիոյ «Nich» քաղաքին մէջ մեռցուած սերպերու գանկերովը՝ «Գանկերու Աշտարակ» մը կանգնած էին:

*

* *

ՍՈՒՏԵՐՈՒ, ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

«Նայիրի»-ի մէջ մեր գրութիւնները կարդացածները կը յիշեն թերևս, որ տասնամեակ մ'առաջ, սիոնիստ Ամերիկացիներուն և ասոնց խամաճիկներուն կատարած հրձիգութեան պատճառաւ, սերպ ժողովուրդին ենթարկուած ողբերգութեան մասին, շատ անգամներ, սրտի ցաւով արտայայտուած էինք:

Եւ մանաւանդ՝ սերպ և հայ ժողովուրդներուն ճակատագրի նմանութեան վրայ ծանրացած էինք:

Ասկէ բաւական տարիներ առաջ ալ՝ 24 Ապրիլ 1994-ին, Պրն. Ժիրայր Նայիրիին խմբագրապետութեան շրջանին [«Արարատ» օրաթերթին մէջ] «Գանկերու Աշտարակը» խորագրով մեր մէկ գրութիւնը հրատարակուեցաւ:

Այս գրութեան նիւթը՝ այդ տարիներուն դեռ նոր սկսող Պոսնիոյ աղէտին մասին էր:

Եւ այս գրութեան մէջ, Պոսնիոյ աղէտին ներքին ծալքերուն մասին, նախատեսութիւններ ըրած էինք:

1995-ին Պոսնիոյ մէջ, Սերպերուն դէմ կատարուած անհաւատալի անհրաւութիւններուն պատճառաւ այժմէութիւն ներկայացնող «Գանկերու Աշտարակը» գրութիւնը, 9 Սեպտեմբեր 1995-ին, «Նայիրի»-ի մէջ, կրկին հրատարակուեցաւ:

Այսօր, սիոնիստ Ամերիկացիները, Kosovo-ի մէջ, սերպերուն դէմ, ասկէ քանի մը տարի առաջ,

ՍՈՒՏԵՐՈՒ, ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Պոսնիոյ համար կատարած նոյն սուտ ամբաստանութիւններով, նոյն շոնդալից սուտ լուրերով Աշխարհի ժողովուրդները կը խաբէն:

Ամերիկացիներուն նպատակը, իբր թէ՛ Kosovo-ի մէջ տառապող Ալպանացիներուն օգնել է:

Մինչդեռ Ամերիկացիները, գիտակցաբար, իրենք հրահրեցին հարցը՝ իրենց տուած զէնքերով զինւած մէկ քանի վարձկան Ալպանացիներուն, սերպ ժողովուրդին

դէմ ահաբեկչական արարքներ կատարել տալով:

Իրականութեան մէջ, Ամերիկացիներուն բուն նպատակը՝ Պոսնիոյ նման՝ Kosovo-ն ալ ձեռք անցընել և, Kosovo-ի մէջ, իրենց խամաճիկ դառնալիք թրքական կառավարութիւն մը հիմնել էր:

Այս է իրենց ապագայ ծրագրերուն մաս կազմող Քոսովոյի հարցին իսկական դրդապատճառը:

Այսօր, Քոսովոյի մէջ, անոնց լարած ծուղակը աւելի լաւ հասկնալու համար, 27 Մարտ 1994-ին գրուած (ուրեմն ասկէ շուրջ քսան տարի առաջ)

ՍՈՒՏԵՐՈՒ, ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

«Գանկերու Աշտարակը» գրութիւնը, անգամ մըն ալ ձեր ուշադրութեան կը յանձնենք:

Տարիներ առաջ, երբ դեռ Պոլիս կը բնակէինք, տարին անգամ մը ինքնաշարժով Պոլիսէն դէպի Երոպա կը ճամբորդէինք:

Եւ այս ճամբորդութեան ընթացքին կ'անցնէինք, նախ՝ Պուլկարիայէն և յետոյ՝ Եուկոսլաւիայէն:

Պուլկարիոյ սահմաններէն Եուկոսլաւիա մտնելէ հարիւր քիլոմէթր ետք, մեր ճամբուն վրայ կ'անցնէինք Նիշ անունով քաղաքէ մը, որ իր ջերմուկներով ծանօթ էր:

Եւ ամէն անգամ, Նիշ քաղաքը չմտած, ճամբուն վրայ կը տեսնէինք մեծադիր ցուցանակ-ծանուցում մը, զոր առանց նշմարելու անցնիլ կարելի չէր:

Բայց այս ծանուցումը ապրանքի մը ազդը ընող հասարակ ծանուցում մը չէր:

Անոր վրայ մեծատառ և չորս լեզուներով՝ Ֆրանսերէն, Անգլերէն, Գերմաներէն և Սերպերէն գրուած էր՝ La Tour Des Crânes, Schadelstorm, Tower Of Cranes և անշուշտ նաեւ սերպերէնով՝ «Գանկերու Աշտարակը»:

Այս ինչ խորհրդաւոր ծանուցում էր:

Կանգ առնել և անոր ինչ ըլլալը հասկնալ կ'ուզէինք: Բայց միշտ ալ, ուշ մնալու վախով, մեր



➔ ճամբան կը շարունակէինք:

Օր մը երբ կրկին Նիշ-էն կ'անցնէինք, այլևս չկրցանք զսպել մեր հետաքրքրութիւնը, և կեցանք:

Եւ հաւատացէք, որ մեր հոն տեսածը մեզ սարսափեցուց:

Այնտեղ մեր տեսածներէն կրած տպաւորութիւնը, մեր աչքերը բացաւ և ամէն բան շատ աւելի յստակ սկսանք տեսնել:

* * *

Իրապէ՛ս, որ գանկերու աշտարակ մըն էր, իսկական գանկերու աշտարակ մը: Եւ գանկերը իրարու վրայ դիզելով, քարէ պատ մը հիւսելու պէս, բարձրացուցեր և սարսափազդու աշտարակ մը շիններ էին:

Բայց ի՞նչ էր գաղտնիքը այս աշտարակին:

Վերջապէս, աշտարակին հսկիչ պաշտօնեայէն իրականութիւնը իմացանք:

1809 ին Նիշ-ի մէջ, Սերպերը կ'ապստամբին բռնակալ Թուրքին դէմ: Դարերու Ազատութեան մարմաջով լեցուած հայրենասէր Սերպերը, քաջաբար կը մղեն ազատագրական կռիւ Թուրքերուն դէմ, բայց իրենց անկազմակերպութեան պատճառաւ, կը կորսնցնեն պատերազմը, և մեծ թիւով զոհեր կուտան:

Եւ Թուրքերը Սերպերուն գլուխները կը կտրեն, կը մորթատեն, մորթերը Պոլիս կը դրկեն, որ ամէն մէկ գլուխի փոխարէն, վարձատրութիւն ստանան: Մաս մը գանկերով ալ բարձր «Գանկերու Աշտարակ» մը կը շինեն, որ ողջ մնացող Սերպերը սարսափին, վախնան և անգամ մըն ալ ապստամբութեան չդիմեն:

Բարեբախտաբար, միջոց մը ետք, Ռուսական բանակը, Պալքաններու մէջ դարերէ ի վեր Թրքական լուծին տակ ճնշուող ազգերուն օգնութեան կը հասնին և կ'ազատեն Ռումէները, Պուլկարները, Սերպերը և Յոյները:

Ազատագրութենէ ետք, այս գանկերու աշտարակին քով, եկեղեցի մը կը կառուցուի, և այս եկեղեցին քաջարի Սերպ ժողովուրդին համար Ուխտատեղի կը դառնայ:

Աւելի ուշ՝ այս ուխտատեղին Թանգարանի կը վերածուի, և ամբողջ աշխարհի ժողովուրդներուն կը ցուցադրուի այս «Գանկերու Աշտարակը», Թրքական վայրագութեան այս «Գլուխ գործոցը»:

* * *

Այս Գանկերու Աշտարակը տեսնելէ ետք, մենք շատ աւելի լաւ հասկցանք, դարերով Թուրքերուն վայրագութեան ենթարկուած մեր՝ Հայ Ազգին կրած տառապանքը:

Եւ ցաւ զգացինք, որ Հայ Ազգը չկրցաւ Թրքական լուծէն ազատիլ Պալքանեան Ազգերուն նման, հակառակ, որ Ռուսերը, Պալքաններէն շատ առաջ, Արեւմտեան Հայաստանը ազատագրել սկսած էին:

Բայց Արեւմտեան պետութիւններուն հակազդեցութեան և Պոլսոյ որոշ Հայ առաջնորդներուն դաւաճանութեան պատճառաւ, Հայ Ազգը մնաց մինչեւ 1915 թրքական պետութեան լուծին տակ, և 1915-ին ենթարկուեցաւ, Սիոնիստներուն կարգադրութեամբ և Թուրքերու ձեռամբ, Աշխարհի վրայ անցեալի և ներկայի մէջ իր նմանը չունեցող «Յեղասպանու-

թեան»:

*
*
*

Եւ հիմա Արեւմտեան պետութիւնները կ'ուզեն, Թուրքին լուծին տակ դարերով տառապած, չարչարուած, ջարդուած, Հարաւային Սլաւիոյ ժողովուրդները, Օսմանեան շրջանի վիճակին վերածել:

Թիթոյի մահէն ետք, Արեւմտեան պետութիւններուն ներկայացաւ պատեր առիթ Ռուսերուն «Եղբայրները» եղող Եուկոսլաւիան [Հարաւային Սլաւները] խորտակելու:

Նախ կաթուղիկ Սերպերը, այսինքն՝ Խրուաթիան և Սլովենիան, իբրեւ անկախ պետութիւն ճանչցան: Յետոյ, Պոսնիայի մէջ, Օսմանեան շրջանին, թուրքերուն կողմէ բռնի դաւանափոխուած Սերպ ժողովուրդը գաղտնաբար զինել սկսան, իրենց գործակալներուն միջոցաւ: Ոյժ տուին կրօնական մոլեռանդութեան: Երեւակայեցէք, որ իրենց կրօնապետը՝ ամերիկացի «Մօլլա» մըն է:

Այս քաղաքականութեան բնական հետեւանքը եղաւ այն, որ միջոց մը ետք, բռնի դաւանափոխ եղածները, սկսան յարձակիլ Սերպերուն վրայ:

Եւ ետքը, երբ Սերպ ժողովուրդը ինքնապաշտպանութեան դիմեց, սիոնիստ արեւմտեան պետութիւնները, ահռելի հակաբրոքականտայի մը սկսան ամբողջ աշխարհի մէջ՝ հեռատեսիլներով, մամուլով և ուրիշ միջոցներով, որ Սերպերը իբր ջարդարար ամբաստանեն:

Եւ իսլամները պաշտպանելու պատրուակով [երբ իրենք են Իսլամ Արաբներուն հողերը յափշտակողները] գրաւեցին Պոսնիան, որուն հետեւանքը կրնայ ըլլայ, միջոց մը ետք, Պոսնիայի մէջ կրօնա-դաւա-

նական անկախ պետութեան մը ստեղծուիլը:

Նոյն խաղը պիտի խաղան ապագային, իբր թէ պաշտպանելու համար Բոսովոյի Իսլամ Ալպանացիները, յետոյ՝ Սկիւպի Մակեդոնացիները, իսկ ակելի ետք՝ շատ ակելի դիւրութեամբ միեւնոյն բանը պիտի ընեն, Պուլկարիայի մէջ, բռնի դաւանափոխուած Պուլկարներուն համար, որոնց թիւը մէկ միլիոնէ ակելի է:

Եւ կարգը պիտի գայ Յունաստանի Արեւմտեան Թրակիայի հողերուն վրայ գտնուող դաւանափոխուած Յոյներուն:

Այս ձեւով՝ ճամբան բացուած պիտի ըլլայ Թուրքիոյ նախագահ Սիլվէյման Տէմիրելին երազած, «Ատրիադիկէն մինչեւ Չինաստան երկարող, «Մեծն Թուրքիա»-յին ստեղծման առջեւ:

* * *

Այս խաղին նախերգանքը Սիոնիստները կատարեցին 1974 ին Կիպրոսի մէջ:

Այն ատենուան Ամերիկայի Արտաքին Գործերու Նախարար հրէածին Հենրի Գիզինճերի թելադրութեամբ և Հենրի Գիզինճերին Ամերիկեան համալսարանի մէջ աշակերտը եղած Թուրքիոյ վարչապետ Պիլէնտ Էճէվիտի կարգադրութեամբ, Թուրքերը յարձակեցան Կիպրոսի վրայ, «Խաղաղութեան արշաւանք»-ի անունով, ջարդեցին Կիպրացի Յոյն ժողովուրդը և գրաւեցին Կիպրոսի գրեթէ կեսին մօտ տարածութիւնը: Եւ Կիպրոս կը մնան, ակելի քան քսան տարիէ ի վեր, Միացեալ Ազգեր ըսուած կազմակերպութեան լռելեայն հաւանութեամբ:



- ▶ Որովհետև 1973-ի Իսրայել-Եգիպտոս՝ «Գիբուր»ի պատերազմին տեսնուած էր, որ Կիպրոսի կղզին լաւագոյն և անփոխարինելի օդանաւային խարիսխն էր, Հրէաստանը պաշտպանելու համար, և Մակարիոսի չէզոքութեան քաղաքականութիւնը պիտի վտանգէր Հրէաստանի ապահովութիւնը:

Եւ նկատի առնել, որ Պիլէնտ Էճէվիտ Թուրքը, դեռ վարչապետ չեղած, իբր լրագրող և բանաստեղծ, Հելլէն ժողովուրդին ուղղուած եղբայրութեան և սիրոյ բանաստեղծութիւններ գրած էր ընկերվարական գաղափարներով: Բայց, ինչպէս որ ատենօք, Յոյն երեսփոխան մը, Օսմանեան Խորհրդարանին մէջ Թուրքերուն երեսին պոռալու և ըսելու քաջութիւնը ունեցած էր՝ «Ճերմակ շուն, սեւ շուն, շունը շուն է. դուք ալ, ո՛վ որ ալ ըլլաք, թուրք էք»:

Յոյն երեսփոխանը իրաւունք ունէր. Թուրքը, ըլլա՛յ Պիլէնտ Էճէվիտին պէս սոցիալիստ, Ալփասլան Թուրքէշին պէս ֆաշիստ և կամ Հայտար Ալիելին պէս Կոմունիստ՝ Թուրքը Թուրք է:

Եւ այսօր, Bosnia-ի ողբերգութենէն շատ տարիներ ետք, նոյն «յանկերգ»ը, նոյն սուտերով, նոյն բեմադրութեամբ կը կրկնուի Kosovo-ի մէջ:

Սիոնիստ Ամերիկացիներուն խամաճիկը եղող՝ «Nato» ըսուած հրէշային կազմակերպութիւնը, ոմբակոծումներով սպառնաց սերպերուն, որ իրենց ուժերը քաշեն Kosovo-էն:

Ան կ'ուզէ որ քաջուին սերպ զինուորները, և քաջուին նոյնիսկ սերպ ոստիկանները, որ գոյանալիք պարապութենէն օգտուելով, դաւանափոխ վայրագ Ալպան յելուզակները ազատօրէն յարձակին Kosovo-ի սերպ ժողովուրդին վրայ և թալանեն ու ջարդեն անոնց:

Եւ սերպերը ստիպուին՝ իրենց դարաւոր պատմական հայրենիքը՝ Kosovo-ն պարպել և հեռանալ: (Ինչպէս որ նոյնը ըրած էին թուրքերը Արևմտեան Հայաստանի մէջ, դարերու տելողութեամբ, մինչև այն օրը՝ 1915 Եղեռնի օրը, երբ ի սպառ ու բոլորովին ոչնչացուցին հայերը և թրքացուցին մեր հայրենի հողերը):

Այս ձևով պիտի իրականանայ սիոնիստ Ամերիկացիներուն ծրագիրը՝ Kosovo-ի մէջ, իրենց իշխանութեան տակ, դաւանափոխ ալպանական պետութեան մը ստեղծումը:

* * *

Եւ այս ողբերգութեան մէջ, մեզի համար ամէնէն ցաւալին այն է, որ քաղաքակիրթ ըսուած սա Արևմտեան Աշխարհին մէջ, ոչ մէկը իրականութիւնները ըսելու համարձակութիւնը ունեցաւ:

Ընդհակառակը՝ բոլոր թերթերը, բոլոր ռատիոները, բոլոր հեռատեսիլները և բոլոր ծանուցումի աղբիւրները միաձայնութեամբ, ամէն օր, ամէն ժամ «Nato»-ի այս հրէշային սպառնալիքները կրկնեցին շարունակ, իբր Աշխարհի առաջին և կարեւորագոյն լուր:

Այս ձևով անոնք կրկին ապացոյցը տուին, որ սիոնիստ Ամերիկացիները, իրենց զէնքին և մանաւանդ «դրամ»-ին ուժովը, գրեթէ բոլոր պետութիւնները և լրատու աղբիւրները խամաճիկի են վերածած :

Եւ այս խամաճիկ պետութիւնները՝ իրենց տրուած հրահանգները թութակի պէս կը կրկնեն և «Robot»-ի

պէս, առանց մտածելու, կը գործադրեն:

* * *

1995-էն սկսեալ, «Նայիրի»ի մէջ մեր հրատարակուած գրութիւններով, ըսած էինք թէ՛

«Ամերիկան «Մեծն Իսրայէլ» մըն է. և ամերիկայի նախագահները սիոնիստ կեդրոնական կազմակերպութեան գործակալի դեր կը կատարեն:

Թերեւս, 1995-ին, այս գրութիւնները կարդացողներուն մէջ գտնուեցան, մեր քողագերծած «իրականութիւններուն» համամիտ չեղող անձեր:

Բայց այսօր, Clinton-ի գայթակղութեան բացայայտուելէն յետոյ, ամողջ աշխարհն գիտէ, թէ Ամերիկայի նախագահը, Սիոնիստներուն ձեռքին գործիք մըն է միայն:

Եւ Սիոնիստ աշխարհակալ կայսրութեան իսկական ղեկավարութիւնը, Սիոնիստ կեդրոնական կազմակերպութիւնն է:

Եւ այս կազմակերպութեան գլուխը կը գտնուի, մեծ հաւանականութեամբ՝ հրեայ Henry Kissinger-ը:

Ամերիկեան կառավարութիւնը, այս կազմակերպութեան հրահանգները կը գործադրէ միայն:

Եւ արդէն՝ ամերիկեան կառավարութեան անդամներուն գրեթէ մեծամասնութիւնը՝ ծանօթ ու թաքուն հրեաներ եղած են անցեալին:

Նշենք միայն քանի մը հատը՝

Արտաքին գործերու նախարարը՝ Madeleine Albright. Չեխ-հրեայ վհուկ մը, որ աշխարհի քաղաքականութիւնը կը ղեկավարէր:

Պաշտպանութեան նախարարը՝ William Cohen. Հրեայ մը, որ աշխարհի զէնքի ուժը իր ձեռքն էր:

Արտաքին առևտուրի նախարարը՝ David Aaron. Հրեայ մը, որուն ձեռքն էր աշխարհի առևտուրը:

Եւ մանաւանդ՝ դրամական գործառնութեան՝ F. E. D.ի նախագահը՝ Հրեայ Alan Greenspan- որ բովանդակ աշխարհի դրամական ուժին միահեծան տէրն է:

Եւ նաեւ, հունգարացի Հրեայ միլիարդատէր՝ George Soros.

Այս անձը ամերիկեան կառավարութեան մաս չէր կազմեր, բայց՝ պետութեան մէջ պետութիւն էր:

Այս այն Soros-ն է, որ իր միլիարդներուն խաղերովը, սակարաններուն մէջ կատարած միջամտութիւններով, շատ մը երկիրներ սնանկութեան առաջնորդեց:

* * *

Եւ Clinton-ը, այս սիոնիստ կազմակերպութեան ձեռքին մէջ, գեղադէմ “Mannequin” մըն էր միայն:

Սիոնիստները՝ Clinton-ի դեռ Arkansas-ի կառավարիչ եղած շրջանին, արդէն գիտէին անոր կարողութիւնները և տկարութիւնները, և մանաւանդ՝ անոր Sexy մոլութիւնները:

Եւ Սիոնիստներն էին, որ Clinton-ը Ամերիկայի նախագահութեան առաջնորդեցին, շատ լաւ գիտնալով, որ անոնք, այս գեղադէմ Mannequin-ը պիտի ուզածնուն պէս խաղցնեն:

Եւ, իրապէս ալ, այդպէս եղաւ:

Եւ ամերիկեան, այս գեղադէմ նախագահին շրջանին, օրէ օր, քիչ մ'աւելի, սիոնիստական գաղթավայրի մը վերածուեցաւ:

* * *



ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՍԿԻՋՐԸ՝

Գայթակղութիւնը՝ Paula Jones-ով սկսաւ: Saxophonist Clinton-ին տուած դասերը՝ Sexy-Saxophone-ի դասերը՝ Paula Jones-ը հրապարակեց:

Եւ գայթակղութիւնները, մէկը միւսին ետեւէն շարունակուելով, հասան մինչեւ Monica Lewinsky-ին:

Clinton-ը Monica Lewinsky-ին, բաւական երկարատեւ, sexy-saxophone-ի դասեր տուած էր:

Եւ այս դասերուն բոլոր մանրամասնութիւններուն, ամբողջ աշխարհն տեղեակ եղաւ:

Եթէ Clinton-ին տեղը, ուրիշ մէկ նախագահ մը ըլլար, այսքան գայթակղութիւններէ յետոյ, անպայման կը հրաժարէր:

Բայց Սիոնիստները, ընդհակառակը, զինք տիրմի մէջ մխրճելէ յետոյ, ամէն բան ըրին, որ Clinton նախագահ մնայ:

Որովհետեւ Սիոնիստները այս գայթակղութենէն օգտուելով, իրենց ուզածէն շատ աւելին պիտի կրնային պարտադրել այս «գեղադէմ և sexy» նախագահին:

Ի՛նչ մեծ ուրախութիւն էր, Սիոնիստներուն համար: Իրենց ձեռքը՝ բարոյական արժէքներէ զուրկ, բոլորովին խամաճիկի վերածուած նախագահ մը ունէին:

Նախագահ մը՝ որ, նոյնատեւ, աշխարհի միահեծան տէրը եղող պետութեան մը նախագահն էր:

Բայց մանաւանդ՝ Սիոնիստներուն համար ամէ-

նեն կարելորդ այն էր, որ այս նախագահի «բարոյականը» օրինակ պիտի դառնար համայն աշխարհին: Եւ անով, իրենք պիտի ա՛լ աւելի տկարացնէին ընտանեկան կապերը, աւանդութիւնները և մարդկային բարոյական արժէքները մարդկային ընկերութենէն ներս:

* * *

Այս բարոյական արժէքներուն տկարացման պատճառաւ է, որ այսօր ու երէկ, Kosovo-ի մէջ կատարուած ողբերգութեան դէմ, Արեւմտեան աշխարհի մէջ, ոչ մէկը գլուխ բարձրացնելու կարողութիւնը ունեցաւ:

Եւ ասկէ ետքն ալ՝ բնա՛լ պիտի չունենայ:

Ինչպէս որ, ասկէ առաջուան մեր գրութիւններուն մէջ, ըսած էինք՝

Սուտերու վրայ հիմնուած աշխարհի մը մէջ կ'ապրինք, ուր Յունա-Եւրոպական քաղաքակրթութեան բարոյական բոլոր արժէքները քանդուած են:

Եւ այս պատճառաւ՝ Սիոնիստական աշխարհակալ կայսրութեան լուծին տակ ճնշուող այս աշխարհին մէջ, Robot- մարդ արարած մը ըլլալով ապրելուս ցաւը ունինք:

ՄԵԼՔՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ԵՒ

ՈՐԴԻՔ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ...

ՀԱՄԱՅՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

ԵՒ

ՄԱՍՆԱԻՈՐԱԲԱՐ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

ԿԸ ՄԱՂԹԷ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ

ՈՒ ԱՐՑԱԽԸ ԱՌԱԻԵԼ

ՈՒԺԱԻՈՐՈՂ

ՏԱՐԻ ՄԸ...

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ Ռուբէն Սեւակի անուան թանգարանի բացման արարողութիւնը:

Ղապարապատ կոչուած պատմական շէնքէ ներս գտնուող թանգարանին, որ հիմնանորոգուած է ֆրանսահայ Յովհաննէս Չիլինկիրեանի պնդիւ բարերարութեամբ, կը ցուցադրուին Մեծ Նահատակի եղբօրորդիին կողմէ Մայր Աթոռին նուիրաբերուած բացառիկ եւ արժէքաւոր շուրջ 200 կտաւներ, ինչպէս նաեւ՝ նշանաւոր նահատակ բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ Ռուբէն Սեւակին պատկանող ածիանկարներ, անձնական




Վեհափառն ու Բարերարը կը հաւտեն նորակառոյց թանգարանի բացման ժապաւէնը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

իրեր ու փաստաթղթեր, պատմական արքայան
ցուցանանյշներ և հայկական գեղանկարչական
գործեր:

Թանգարանի բացման արարողության ներկայ
գտնուեցան Մայր Հայաստանի Վրաստանի, Ռու-




Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը

ասատանի և Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէ
Եկեղեցիի առաջնորդ Տ. Ռաֆայէլ Արքեպս. Մի-
նասեանը, ՀՀ Մշակույթի նախարար Յասմիկ Պո-
ղոսեանը, ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յա-

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ



Չախէն աջ՝ Յակոբ Աւագեան [Յով. Չիլինկիրեանին փեսան], Յովհաննէս Չիլինկիրեան և Վեհափառը կորեանը, կրթութեան եւ մշակոյթի շատ գործիչներ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ բարերար Յովհաննէս Չիլինկիրեանի կողմէ թանգարանի մուտ-



Իսկզույնմ մուսուլմանս մկ յվնսսւօժնէ
 վիտւզՈ՛Ս :«ոչխոյտմ» ստիտսգի ըվսսոշ
 տիվոտ Գ ոմն հոսզ ոսհոսվ ճոժ՝ ղվստի մն
 հոսզ սօնոմ ոզ :Գ «հոսզ» մոյտոյ ոչսսս վոչս մն
 ոչվեւսօնզստոոյոժ հոտզՈ՛ ղհժու՛Ս» – Իսկոմ ճչի
 –տոչսսս ոչսվիլիլիշ ոչոյտսիսց մտվց :«մի
 –տտաշվի վիտւզՈ՛ ղհժու՛Ս օնզստոոյոժ ոչտոցոչո
 ղտոտսոյ վիսզնէ թզՈ՛ Թ-ԳԻԳԻ տոնոտոյոյ ու
 տոնոտնզհոսվի ոսմի վսսս ժնւտ ոմ մս վոցժ
 ժոյոմնի ոչտոտոյիտ մն վժշտսկ ժոչո սօնոլ»
 ճչտշչՆ մոյտսվիլիլիշ ոչոյտսիսց մտվտ մտմ
 –սմժ վոյտսոյոյ իսկնսս ոչժոօլ վտն մկ


:մոյտոյտիսվՈ՛ ղհժու՛Ս մտիսզս վոյտմ
 –տոնոյոյ ոսհոսքստիտիոյոյ ոյտաոյ վոյտիսժո
 մտտոշոյ ոտոմ ժոօլ ոչոյեւստվոտոյոյ
 ղսոչստոլ :մոյոյ ոչոյեւսոյ ոյոյոյ ոտոյոյ
 վտվտ մտլմ մտզմոյ ոչոյշոշնչ ոս՝ ղսօժժ
 –տոյ մտժհքմ կտմնոնոն ճչո վոյտսօյոյ
 ճոնոնիսջ ոս՝ մոյտսիտոյ ոտոյոյ
 կվսոլ Տ ոչոյտ վիլիլի ղ ղսոյտսօյոյ
 վտել մոյոյ Մոյոյ էկոյոյ հոնօլ ոչոնոյ

:ղվեւսսստո ոչոյեւսոյօ տոնոյտոյ
 –տի ժոյեւսոյտոյոյ վտխոյտմ» ստիտս
 –չի մտ՝ ոյտսօյոյ ճոստիտոյ ոյնզօստ
 ժտոյ մնչոյիսջ՝ ղտոլ ճչնի մոյտոյոյ վժ

ԱՎՍԱՐՈՒՎՆՉԷ ԹՎԱՍՍ ՍՍ-ԹՈ յԵՈՈ
 ՇՈՎՍԵՈԹ ԿՐՈՅՈՒԹՈՒԹ ՂԱՎՍՂՈ ԿԻՆԿՐՈ ՂԷԹՎԱՍ
 ՂԿՎԹՎԱՍՅՈՒԵՅՍՆՈՆ

▶ Վեհափառ Հայրապետին թանգարանի ծրագիրը կեանքի կոչելու առիթով: Տիար Յովհաննէս Չիլինկիրեանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց նաեւ Ռուբէն Սեւակի դուստր Շամիրամ Սեւակի երախտագիտութիւնը եւ ջերմ շնորհաւորանքները:

Արարողութեան աւարտին ներկաներուն իր օրհնութիւնն ու պատգամը շնորհեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Այս թանգարանի հիմնունը յարգանքի տուրք և խոնարհում է ինչպէս Ռուբէն Սեւակին, այնպէս եւ Գրիգոր Չօհրապին, Սիամանթոյին, Վարուժանին, Կոմիտասին, մեր միւս մեծերին, մէկ եւ կէս միլիոն մեր անմեղ պոետին, ովքեր չուրացան իրենց հաւատքն ու հայրենիքը եւ ընդունեցին նահատակութեան պատկը: Անոնք նահատակուեցին իրենց սրտում վառ պահելով տեսիլքը, որ ապրելու և յարատելելու է հայ ժողովուրդը: Թանգարանը նուիրում է Հայոց Ցե-



ղասպանութեան 100-ամեայ տարելիցի ոգեկոչմանը և ունի առանձնայատուկ նշանակութիւն: Այն այցելուների միջոցով վերածուելու է ղօղանջող անլռելի վանգակատան, որի ձայնը լսելի պիտի լինի աշխարհում՝ նպաստելով Յեղասպանութեան միջապգային ճանաչմանն ուղղուած ջանքերին:

Թանգարանը դառնում է անցեալի, ներկայի և գալիքի մէջ անմահութեան ձայն, մահուանից վերածնուելու, նորից յառնելու և կեանքով յաղթելու ուղի: Այսօր մենք ոճրագործութեանը պատասխանում ենք մեր ժողովրդի ապնիւ վաւակի ու նահատակի յիշատակը յաւերժացնելով, կործանմանը պատասխանում ենք կառուցումով, աւերմանը՝ վերաշինութեամբ, մահուանը՝ կեանքով: Չարին բարիով պատասխանելու քրիստոնէական այս ոգին դարձել է մեր ժողովրդի նկարագիրն ու էութիւնը, որը միշտ զօրացնելու է մեզ՝ ապրելու և արարելու: Ինչպէս մեր նահատակ մեծ բանաստեղծ Ռուբէն Սեւակն է ասել՝ «...Ով որ կեանքին հաւատքն ունի՝ երկինքէն բռնուելիք չունի մ'ունի: Ո՛վ որ յաղթութեան յոյսն ու Երջանկութեան սէրն ունի՝ ան իր ուսերուն վրայ երկու թեւեր ունի...», – ասաց Նորին Սրբութիւնը:

Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատանք յայտնեց մեծարգոյ Տիար Չիլինկիրեանին՝ սիրայօժար յանձնառութեան, նախանձախնդիր ոգու և ապնիւ բարերարութեան համար: «...Իրա-

-դք վիտազՆ . Ս : ովոտտոմոմ > ճգրաւգժմովադ մսս
դոմմեոյմել վր ոտիոմճնսժոմ , ոտմմեոյմել վտոմմ
-տոմմ վր վիմննա դք դսժմի լոմ , խժոժոտոյ
դնովր ճս դ է ժսե ղնովր ճս ոՆ - . րոմմ ոտդոսն
- օՊ հվոմոճ վրսսմմոմոյ ոյ վեմսիոմճՆ . > . >

: ովժվոյմոյ

դեմմոմոմոտտոդ դ ոտիոմգոստովմժ ովժոտոտոյ
մվ լոդր ովմտոտոյ տեգտովա դ մոյոգեւեոյոս
- ոթ վժնգտոտոյմժ հտոտոյոյ տւոյոսն նմնոյ
դոյ ոգիճոյվ , ոյ մգոճվմիոյ լոյ մոտր ժգր վնգ
- միոյմնգե ժոսնոմիվգոյ մս վոյմժ , մոյվեւսգի
վտոգրսմ լոյ վոյոս լոե ոյմ վիոգիմս , մոյոյ
տնմոյ լոյ է վսւմի ճոյոմիոմճ դսժոոյ մվ
ճոյն մոյոմմոմ > ստիտոյի մս ոգիճոյվ , դսոյոյ
- ճՆ . Ս մոտտոտոյ վոմմեոյմել վիտազՆ . Ս

: ոյոգեւեւեոյոս վոյմմե

- ոյմել ճգեւոյ ժեմեոյմ վստոյվմս դ վմժ իսժ
- ժոլոմ ոմոմ , ովնգոյմ մսնժ ժոնգոյս ոյոսննգոյ
ճոյնվ դսնգոյժոյոտոյճոյ ոյոնոմժ վոյմմեոյմել ոյ
- ոյ ճոյնժ մոյվեւսգոյ մվ ոյոյեւեւեւ ովնս

: մոյոյմճճ վնմժ լոտտոմ ճվնս

- ոտոյ մսեվի . Ս . Գրիգոր լոյ > ժոյնոյ վոյի
- մոմ > ճոմ > մ է դսնմմի մժժնսի ովմնվ
- Բա : մոյոմմոմ > ստիտոյի ճոյն - « մնսոյնսոյ
ոյոյեւսոյմ վնիսնսթ մր ոս ովն տեոյմ
- ոյոմ մոմն մոմն մր , միտոմճվ վնգիտո
- ոյոյ վոյնոյ տեոյմ է վստոյն , դսնմիոյ
ոյնվ , տոյ վոյնոյն ոյոյեւսոյոյոյ
ճոմ > ժոսնոյմի ճվնսի վոյնիսեոյ ոգեոյ
մս , մոյմմեոյմել վիտազՆ ոյնս . Ս ճոտտոտոյ
դոնոյմի ոյոյոյոյ վոյոյոյոյ , ոյոյ
- ժոյնճճ մնս ոյոյեւեւ ովնոյ , մոյն
- մ խնոյմ , միոյն ոյն վնգիմս ոյոյոյ

ռագրերը, իր ձեռքով առուած գծագրերը, այսինքն այն ամէնը ինչ վաղուց պէտք է լինէր այստեղ, որովհետեւ Հայաստանում է երաշխաւորուած նրանց պահպանութիւնը և փառք Աստուծոյ, որ այս մարդիկ իրենց ձեռքով հաւաքեցին, գուրգուրեցին և կարողացան հասցնել մինչեւ Հայաստան:

Արարողութեան աւարտին ներկաները շրջեցին նորաբաց թանգարանով, ծանօթացան գեղանկարներին՝ Յովհաննէս Այվազովսկի, Սարգիս Խաչատուրեան, Հրանդ Կիւլպէնկեան, Չարեհ Մուրաֆեան, Էտկար Շահին և ուրիշներ: Յուցասրահում տեղ է գտած Ռ. Սեւակի արխիւային նիւթերը, բացառիկ փաստաթղթեր, իր ու տիկնոջ նամակները: Ի դէպ, ցուցանանուշներից շատերը փրկուել են գերմանուհի կնոջ Եաննի Աբելի շնորհիւ: Թուրքերը չեն համարձակուել խուլարկել գերմանահայատակի տունը: Ներկայացուած են աքսորավայրում եղած վերջին օրերի հետ կապուած գրագրութիւններ, ինչպէս նաև աքսորավայրում իրեն հետ եղած անձերի և հրաշքով փրկուածների վկայութիւնները, թէ ինչպէս նա աքսորավայրում հաւատարիմ մնաց իր քրիստոնէական հաւատքին, հակառակ այն բանին որ խոստացել էին հաւատքի ուրացման դիմաց ապատութիւն:

Փաստաթղթերից տեղեկանում ենք, որ գրողը խոստում էր վերցնում իր բանտակից ընկերներից՝ ոչ մէկ դէպքում չուրանալ Հաւատքն ու Հայրենիքը:

Խ.Ծ. «Նայիրի» իր հրճուալից շնորհաւորանքը կը փոխանցէ, այս մեծախորհուրդ ու [Շար. էջ 37]

անշեւ: Սակայն, ներքին բարեփոխումներու պարագային կարելիի սահմանը կը մնայ իրագործելի՝ ֆաղափական կամֆով ու հասարակական աւելի դրական արժէքներով, բարելաւելու պետական վարչամեքենան, զայն ձերբազատելով ներկայի օրինական դանդաղութիւններէն ու ապօրինի բազմաբնոյթ ու բազմամակարդակ գործառնութիւններէն:

Յետ անկախացումի, առաջին տասնամեակը բնականաբար եղաւ առիթ մը անցումային շրջանի տնտեսական ու ընկերային տագնապները դիմագրաւելու ու բարեփոխումներու միջոցով կարելի եղած չափով հասնելու օրինաց երկրի միջազգային չափանիշներուն: Նոյն տասնամեակին, Սփիւռքը իր երրորդ սերունդով, ապրեցաւ տարբեր բնոյթի անցումային շրջան մը, յոյսի ու յուսահատութեան հակասութիւններէն ծնած վերածնունդի ու ձուլումի անորոշութիւններով:

Որպէս ազգ. Հայաստան եւ Սփիւռք գործակցաբար, վտանգաւոր յապաղումով, անհրաժեշտ է որ ծրագրենք մեր յառաջիկայ հարիւր, յիսուն ու քսանհինգ տարիներու ապագան: Տեսիլքը, տեսական մտածողութիւնն ու երազը նոյնքան էական են որքան ամէնօրեայ գործնական իրագործումները: Առանց տեսիլքի ու յստակօրէն սահմանուած նպատակներու, որպէս հաւաքականութիւններ, մենք չենք կրնար ունենալ նպատակասլաց և համապարփակ աշխատանք՝ ֆաղափական, հասարակական, տնտեսական, մշակութային և կրթական մարզերուն մէջ:

Յառաջիկայ տասնամեակը պետք է վերածուի՝ Սփիւռքի և Հայաստանի համագործակցութեամբ համապարփակ համահայկական ազգային երկար ժամկետային ծրագիրներու մշակման ու գործադրութեան շրջանի մը:

Համապարփակ ծրագիրը պետք է ընդգրկէ, ազգային նպատակներու յստակացումը՝ պահանջատիրական, ֆառաֆական, տնտեսական, մշակութային ու Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւններու մարզերուն մէջ: Այդ նպատակներուն իրագործումի յարմարաւէտ միջոցներուն կազմակերպումն ու գործադրութիւնը, Հայկական ներուժի ամբողջական լարումով, կ'իրագործուի՝ հաւատարմով Հայաստան-Սփիւռք դրական, կառուցողական գործակցութեան երկարաշունչ աշխատանքին կարեւորութեամբ, ազգային ապահովութեան, հասարակական ու անհատական կենսական ոլորտներու մէջ:

Հայրենիքի հզօրացումը անպայման կ'ունենայ իր դրական դրսեւորումը Սփիւռքի մեր մշակութային ինֆորմութեան պահպանման աշխատանքին մէջ: Ինչպէս նաեւ, Սփիւռքի վերակազմաւորումը ազգային նպատակներու շուրջ, կ'ունենայ իր օգտաշատ դերը Հայաստանի բարգաւաճումին մէջ:

Արդ՝ էական է որ անյապաղ սաղմնաւորուի Համագային միաւորող կառոյցի մը ստեղծման գաղափարն ու գործնական ծրագրաւորումը, նկատի առնելով անոր կենսական պահանջը, ստանձնելու համար մեր ազգային հիմնահարցերու հետապնդման անյետաձգելի գերագոյն պատասխանատուութիւնը:

Հայաստանի անկախացումէն ի վեր, Հայաստան-Սփիւռք գործակցութեան ուղղութեամբ ցարդ կատարուած աշխատանքները կը մնան անբաւարար իրենց անհետեւողական ու անկազմակերպ վիճակով, փոխադարձ ակնկալութիւններու անիրապաշտութեան պատճառով:

Հայաստան ու Սփիւռք, հակառակ այն իրողութեան որ ունին հասարակաց պատմութիւն ու մշակութային ժառանգութիւն, իրենց ընկերային կազմուածքով ու մտածելակերպով կը տարբերին իրարմէ բազմաթիւ պատճառներով ու «Մէկ ազգ, մէկ մշակոյթ ու մէկ եկեղեցի» նշանաբանը առայժմ լոկ զգացական ակնկալութիւն մը կ'ըլլայ ու կը կարօտի գործնական իրագործումի:

Հայաստան որպէս նորանկախ պետութիւն, ունի իր ուրոյն քաղաքական, տնտեսական ու ընկերային հարցերն ու առաջնահերթութիւնները: Մինչ՝ Սփիւռքը որպէս աշխարհացրիւ համայնքներու խումբ, ունին՝ տարբեր մտայնութիւններ, դիրքորոշումներ ու կարելիութիւններ, առանց՝ զիրենք ներկայացնող կեդրոնական ղեկավարութեան մը:

Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւնները պէտք է հիմնուած ըլլան փոխադարձ յարգանքի ու հասկացողութեան վրայ, որպէսզի գործակցութիւնը ըլլայ երկու կողմերուն կարելիութիւններու սահմանին ու Համահայկական ազգային բարօրութեան ծիրին մէջ:

[Շար էջ 33-էն]

նգեշնչող եղելութեան առթիւ, Մեծ Նահատակի եղբորորդի Յովհաննէս Չիլինկիրեանին որ վերակենդանացուց «Հաւատքի ու Հայրենիքի» սիրոյն ու համար նահատակուած դիւցապնին, որու լիարժէք գնահատման, վսեմացումին ու մերօրեայ նոր սերունդին տեսլական դարձուելուն իր համեատ քայց եռանդագին մասնակցութիւնը ընծայեց ու կը շարունակէ բերել «Նայիրի»ն, շատ տասնամեակներէ ի վեր: Քար լռութեան եւ անտարբերութեանը դիմաց շատերու որոնք իրար կը հրմշտկեն այսօր որ իրենց ուշացած կամ պլացած յարգանքը մատուցեն համար Մեծ Նահատակի յիշատակին:

Դեռ կ'անդրադառնանք պատմական այս ողջունելի եղելութեան:

Յիշեցենք որ Ասողիկ քահանայ Կարապետեանը իր խօսքին մէջ նշած էր.— Յովհաննէս Չիլինկիրեանի պուհցերաբնակ փեան Պրն. Յակոբ Աւագեանը այցի էր եկել Վեհափառին: Ամենայն հայոցը պրոյցի ընթացքում յայտնում է որ կը ծրագրէ Ս. Էջմիածնի թանգարանի համալիրը ընդլայնել: Պրն. Աւագեան յայտնում է Վեհափառին, թէ Պրն. Չիլինկիրեան ցանկութիւն ունի Ֆրանսայի Նիս քաղաքում գտնուող Ռ. Սեւակի Յիշատակի Տունը ամբողջութեամբ տեղափոխել Հայաստան և խնդրում է Վեհափառին աջակցութիւնը:

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻԶ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻԻ ՄԱՀԸ

Քառասուն օրեր առաջ հողին յանձնուեցաւ գաղափարական գործիչ եւ «Արարատ» Օրաթերթի երկարամեայ խմբագիր ժիրայր Նայիրի մարմինը:

Ան իր դաստիարակութիւնը ստացած էր Սահակեանի յարկին տակ ուսուցիչներ ունենալով Բենիամին ժամկոչեանի, Արսէն Կիտուրի, Ասատուր Էլնանեանի և Արմենակ Էլոյեանի նման հեղինակաւոր անձեր: Յիշուած բոլոր դէմքերն ալ եղած են խմբագիրը «Արարատ» Օրաթերթի: Ինքն ալ իր ուսուցիչներուն հետեւողականութեամբ եղաւ հասարակական գործիչ և խմբագիր: Անոնք կը պատկանէին այն սերունդին որոնք գաղափարական մարդը և հայրենասէր հայը պատրաստեցին մնացորդացին վիճակուած գաղթական պայմաններուն տակ: Անոնց շունչին տակ պատրաստուած ժիրայր Նայիրին իր ուսուցիչներուն հետեւողականութեամբ մուտք գործեց կանուխէն Հնչակեան շարքերէն ներս:

Հասարակական գործունէութեան ընթացքին ունեցաւ նաեւ այլ գաղափարանուէր ուսուցիչ մը, Յարութիւն Կուժունին որ քանի մը սերունդներուն վրայ իր դրոշմը դրաւ զանոնք մղելով պայքարի՝ յանուն ընկերային արդարութեան, յանուն աշխատաւոր դասակարգի իրաւունքներու պաշտպանութեան և յանուն Լիբանանեան հայրենիքի բարօրութեան:

Այդ օրերեւու Լիբանանը կը յատկանշուէր մէկ կողմէ դրամատիրական շահագործումներով և միւս կողմէ արտաքին ուժերու միջամտութիւններով:

Ժիրայր Նայիրի առաջին օրէն զինուորագրուեցաւ գաղափարական պայքարին ազգային կամ միջազգային յետադիմական ուժերու դէմ: Դիւրին չէր այդ օրերուն յետադիմական ուժերու դէմ պայքարը, որոնք միջոցներու մէջ խտրութիւն չէին դնել իրենց դէմ ցցուծ ընկերային և քաղաքական հոսանքներու և գործիչներու նկատմամբ:

1945-թ.ին, Բ. Համաշխարհային պատերազմէն ետք պաղ պատերազմի տարիներուն կենսական կը համարուէր խաղաղութեան համար մղուած պայքարը: Խաղաղութեան համար

մղունող պայքարի շարժերուն մէջ կը գտնուէր նաեւ ժիրայր Նայիրին: Խորհրդային Միութեան կողմէն Խ. Հայաստանը եւս յաղթական դուրս կուգար:

Այս գաղափարները եւ իր կուսակցութեան գաղափարախօսութիւնը իրը նկատելով «Արարատ» օրաթերթի խմբագրական կազմին անդամ դարձաւ, նախ իրրեւ առաջին էջի քաղաքական լուրերու թարգմանիչ և ապա խմբագրապետ: Այդ օրերուն մամուլին դերը կարեւոր և անփոխարինելի կը նկատուէր ժողովրդական գանգուածներու կողմնորոշման համար: Չկային այսօրուան նման հաղորդակցութեան արդիական միջոցները:

Անդամագրուելով Հնչակեան Կուսակցութեան կանուխէն գրաւեց կարեւոր պաշտօններ: Երկար տարիներ եղաւ Լիբանանի շրջանի վարիչ մարմնի անդամ ըլլալով ներքին և արտաքին յարաբերութիւններու կազմերուն անդամ: 1965-թ.ին 10-րդ ընդհանուր համագումարին ընտրուեցաւ Ս.Դ.Հ.Կ.-ի Կեդրոնական վարչութեան անդամ՝ որմէ ետք 1987-թ.ի Աթէնքի մէջ գումարուած համագումարին դարձաւ երկու տարուան ատենապետ: Ղեկավար դիրքերու վրայ գտնուած շրջանին բազմաթիւ անգամներ հրաւիրուեցաւ Հայաստան առաջինը 1961-թ.ին Յարութիւն Կուժունիի և Բենիամին ժամկոչեանի ընկերակցութեամբ Հայաստանի Խորհրդայնացման քառասնամեակին: Այցելութեան ընթացքին է որ Սփիւռքահայ պատուիրակութեան կազմին հետ պատմական հանդիպումը կայացաւ Խորհրդային աշխարհի ղեկավար Նիքիթա խրուշչովի հետ: Որու ընթացքին արժարժուեցան հայկական հողային դատի և պահանջատիրութեան հարցերը:

Իր հրապարակագրական յօդուածներուն և խմբագրականներուն հետ գրչի մարդ որպէս հրապարակեց հետեւեալ հատորները «Հայրենի Կտուրի Տակ» 1962 հայրենական յուշեր և տպաւորութիւններ: «Հնչակեան Կուսակցութիւնը և հայկական հողային դատը 11-րդ Համագումարի Որոշումներուն Ուղիով» 1968, «Հայուն Արեւմուտը» Հարաւային Ամերիկայէն տպաւորութիւններ: «Ժիրայր Նայիրի Հարաւային Ամերիկայի հայ գաղութները ուղեւորուեցան ազգային և կուսակցական անախելութեամբ:

ՆՈՐ ԹԱՓՈՒՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԵՐԱԽՏԱՒՈՐ՝ ԺԻՐԱՅԻ ՆԱՅԻՐԻՆ

Հայ մամուլը կորսնցուց իր բազմամեայ վաստակավորներին՝ ժիրայր Նայիրին, որ աւելի քան կէս դար ծառայեց հայ գրաւոր խօսքին, որպէս հրապարակագիր-խմբագիր:

Աւագ սերունդի Այս նուիրեալը, անխախտ համոզումով և անսպառ կորովով մնաց պատնէշի վրայ, չնկրկեցաւ որեւէ դժուարութեան առջեւ, դիմագրաւեց խոչնդոտներ, յաղթահարեց մարտահրաւէրներ ու կառչեցաւ իր կոչումին:

Որքան գաղափարի հաւատաւոր, նոյնքան ալ սկզբունքի տէր էր Նայիրին, իր հայեացքներով ու դատումներով, իր համոզումներով ու դիտարկումներով, որոնք զինք դարձուցած էին զօրաւոր և անբեկանելի անձնաւորութիւն մը, անդրդուելի և անտեղիտալի հեղինակութիւն մը, բայց, ամէնէն աւելի, անբասիր և անվիճելի հայրենասէր մը:

Իր երկարամեայ խմբագրապետութեան շրջանին, Նայիրի միշտ և ամենուրէք ներկայ էր իր առաջնորդող յօդուածներով, հայ կեանքը, գաղութը, հայրենիքը և ընդհանրապէս ապագայի հարցերը յուզող խորհրդածութիւններով ու մեկնաբանութիւններով:

Անցնող շուրջ 50-60 տարիներու մամլոյ պատմութեան մէջ, ուր հայ հրապարակագիրին ու խմբագիրին խօսքն նուիրականութիւն ու հրամայականութիւն էր, ժիրայր Նայիրին եւս եղաւ այն բացառիկներէն որուն՝ խօսքն ու գրիչը տիրական էին, կշռելի, ուսանելի և մտորելի:

Ճակատի մտաւորական կամ գաղափարախօս ըլլալը զինք աւելի պարտաւորեցուցած կամ պարտաւորեցնող դարձուցած էր, անդրադունալու մեր ազգային կեանքը ալեկոծող և առաջնորդող գերխնդիրներուն, ուր Նայիրի, իրեն յատուկ ոճով ու կշռոյթով, բառապաշարով ու խոկումներով, կը պաշտպանէր թէզ, տեսիլք կամ իրադարձութիւն:

Խորհրդահայ կարգերու շրջանին, Նայիրի՝ ամուր և անխախտ կապերով, հայ մամուլը դարձուց այն «ոսկեայ» գրողներէն մէկը, որ հայրենիքը կը կապեր Սփիւռքին և՛ հակառակը, որովհետեւ ատիկա էր իր գաղափարական դաւանանքն ու հաւատամքը:

Անխնայ ու խստապահանջ էր ազգային կեանքին մէջ նշմարուող (ու նշմարելի) իւրաքանչիւր սահանքի նկատմամբ, իսկ այդ մէկն զինք կը մղէր հրապարակաւ արատայայտուելու, անվարան քննադատելու հաւատարիմ մնալով այդ ԱԶԴՈՒ խօսափողի հնչեղութեան ԱՆՓՈՒԱՐԻՆԵԼԻ հզօրութեան:

Վստահաբար, նորօրեայ մամուլի պատմութեան գրաւութեան և արձանագրութեան մէջ [եթէ օր մը... իրականանայ], նայիրին պիտի ունենայ իր արժանաւոր տեղը, որովհետեւ, շատ այլոց, ան եւս այդ դպրոցի կարկառուն շահաւիղներէն էր, միաժամանակ յուսալով որ՝ հայրենի պատկան կողմեր ալ կը գիտակցին ատոր, հետեւաբար, յետմահու, կը գնահատեն հայ միտքի ու գրիչի այս երախտաւորը և անոր դերակատարութիւնը:

Առ այդ, ժիրայր նայիրիի մեկնումով, հայ մամուլը կորուստ մը եւս արձանագրեց, այն հարցադրումով թէ այսպիսի երախտաւորներուն տեղը՝ ո՞վ, ինչպէ՞ս և ե՞րբ պիտի հատուցանէ:

Յամենայն դէպս, ԺԻՐԱՅԻ ՆԱՅԻՐԻՆ, մամուլի հարազատ զաւակ էր, օրինակելի նուիրեալ և ամրակուռ խարիսխ:

Ապրի իր յիշատակը:

Պէյրութ, Դեկտեմբեր 5- 2013

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Հրապարակագրի առօրեան դժուար եղաւ յատկապէս Լիբանանի քաղաքացիական տարիներուն: Ինք պատնէշի վրայ մնացողներէն էր իր խիզախ գրիչով: Իր կենսագրութեան մաս կը կազմէ նաեւ իր հրապարակախօսի արժանիքները: Անոնք ազդեցութիւն կը գործէին ուկնդիրներուն վրայ: Հոնտորի ձիրք ունէր: Մարդկային ծառայութեամբ ալ կը յատկանշուէր իր նկարագիրը: Այդ տեսակէտով ալ օգտակար եղաւ այն բոլոր ուսանողներուն որոնք կ'ուզէին իրենց ուսումը շարունակել հայրենի բարձրագոյն հիմնարկներէն ներս: Սփիւռք Հայրենիք կապերու զարգացման բերաւ իր գնահատելի նպաստը՝ երկխօսութեան նստելով հայրենի մտաւորականներու և ղեկավարներու հետ: Պատեհապաշտ չէր այլ իր որդեգրած ուղեգիծին հաւատարմօրէն հետեւող: Հայաստանի անկախութենէն ետք ալ մնաց խորհրդայինի պաշտպանը:

Իր անձնական տեսակէտները ունենալու համար ուզեց ունենալ իր անձնական բերքը: Գնեց մահացած Անդրանիկ Մառուկեանի «Նայիրի» շաբաթաբերքը 1994-թ.ին Յովհաննէս Զիլինկիրեանի օժանդակութեամբ որը մինչեւ վերջ մնաց «Նայիրի»ի աջակիցը: Թերթին շուրջ համախմբեց հոսկէ և արտասահմանէն աշխատակիցներ: «Նայիրի»ի առաջնորդող յօդուածները հանոյժով կարդացուեցան ընթերցողներու կողմէ:

Կեանքէն հեռացաւ Զորեհշաբթի 27 Նոյ. 2013-ին իր ետին ձգելով հրապարակագրի, հրապարակախօսի, և ղեկավարի վաստակը: 11 Դեկտ. 2013 ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Հ Ա Ն Դ Ի Պ ՈՒ Մ Վ Ա Ս Տ Ա Կ Ա Ի Ո Ր Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Գ Ի Ր -
Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ի Չ Ժ Ի Ր Ա Յ Ր Ն Ա Յ Ի Ր Ի Ի Հ Ե Տ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Առաջին հանդիպումս ժիրայր Նայիրիին հետ, րուն անու-
նով՝ ժիրայր Սեդրակ Թօսունեան, տեղի ունեցաւ 1949-թ.ի
վերջաւորութեան: Ինք քան տարեկան էր, ես քանրմէկ:

Խանդավառ երիտասարդութեան օրեր էին: Երկուսս ալ
Հայաստանով խանդավառ:

Մեր առաջին տեսակցութեան օրուան գլխաւոր նիւթը
գաղափարական հարցերու շուրջ դարձաւ: Գիտական ըն-
կերվարութեան նախահայրեր՝ Մարքսի ու Էնկէլսի Մանի-
ֆեստի մը շուրջ խօսեցանք: Գերման երկու հեղինակնե-
րու գործն էր այդ, որուն առաջին տողը կը սկսէր այս-
պէս... Ուրուական մը կը շրջի Եւրոպայի մէջ...

Այդ մանիֆեստը առաջին անգամ գերմաներէնէն հա-
յերէնի թարգմանած էր 1887-ական թ.ներուն Հնչակեան
մը [Աւետիս Նազարբեկեան, կուսակցութեան գլխաւոր
հիմնադիրը իր կնոջ՝ Մարոյի գործակցութեամբ], եթէ չեմ
սխալիր] ու հրատարակած առանց ստորագրութեան:

Ուրեմն, Հնչակեաններն էին Գիտական Սոցիալիզմի
գաղափարներու տարածման առջինները հայութեան
մէջ:

Այդ օրերուն, նախաերիտասարդական տարիքին իսկ,
այդ գաղափարները գիտակցօրէն ընդունելու մակարդակի
հասած էինք, առանց զանոնք խորագոյն վերլուծումի կա-
րենալ ենթարկելու սակայն:

Ժիրայր կ'ըսէր որ ինք իւրացուցած է այդ տեսութիւն-
ները համոզումով: Եղած է ու կը մնայ հաւատարիմ այդ
գաղափարախօսութեան ու պատմափիլիսոփայութեան:

Ըսած եղայ... Խանդավառութիւնը մեր երիտասարդու-
թենէ կուգար:

Հ Ա Ն Դ Ի Պ ՈՒ Մ Վ Ա Ս Տ Ա Կ Ա Ի ՈՐ Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Գ Ի Ր -
Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Գ ՈՐ Ծ Ի Չ Ժ Ի Ր Ա Յ Ր Ն Ա Յ Ի Ր Ի Ի Հ Ե Տ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Անշուշտ, այդ օրէն մինչեւ այսօր, մենք բազմաթիւ առիթներ ունեցանք կարծիքներ փոխանակելու համար իրարու հետ:

Եւ ահա այսօր, այդ հանդիպումէն, առաջին տեսակցութենէն ետք, Թօսունեաններու տան մէջ եմ, երբ ժիրայրը արդէն հասակ առած է ու դարձած տէր թոռներու:

Բաժակ մը սուրճի շուրջ կը զրուցենք:

Հին օրերուն ուրուական մը կը պտտէր եւրոպայի մէջ: Այդ Գիտական Սոցիալիզմի ուրուականն էր:

Այլ ուրուական մը չէ՞ այսօր պտտողը արաբական աշխարհի ու ամբողջ աշխարհի մէջ, այս անգամ՝ զարգացած դրամատիրութեան ուրուականը, երբ արաբական աշխարհը քար ու քանդ կ'ըլլայ Աֆղանիստանէն մինչեւ Լիպիա ու Սուտան:

Ի՞նչ կ'ուզեն այս դրամապաշտները. աւերակներո՞ւ վերածել, կործանե՞լ դարերով դիզուած մշակոյթը ժողովուրդներու, քարայրներու մէջ բնակեցնե՞լ մարդկութիւնը:

Եւ ամբողջ աշխարհի մէջ այսօր, այս անգամ՝ զարգացած դրամատիրութեան ուրուականն է որ կը շրջի, Աֆղանիստանէն մինչեւ Լիպիա ու Սուտան:

Ի՞նչ կ'ուզեն այս դրամապաշտները. աւերակներո՞ւ վերածել, կործանե՞լ դարերով կերտուած մշակոյթը ժողովուրդներու, քարայրներո՞ւ մէջ բնակեցնել մարդկութիւնը:

Ծանր է մտածել այս բոլորին մասին:

Եկած եմ որ զրոյցս թեքեմ այլ ուղղութեամբ:

-Նայիրի, ինչո՞ւ լուր աշխարհ եկած ես, հիմա երբ Նայիրի անունիդ կողքին՝ «Նայիրի» շաբաթաթերթի տնօրէն խմբագիրն ես, կրկնակի Հայաստան մը դառնալով:

Կը ժպտի: Կը խնդանք: Հասկնալի կը դառնայ, որ

Հ Ա Ն Դ Ի Պ ՈՒ Մ Վ Ա Ս Տ Ա Կ Ա Ի ՈՐ Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Գ Ի Ր -
Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Գ ՈՐ Ծ Ի Չ Ժ Ի Ր Ա Յ Ր Ն Ա Յ Ի Ր Ի Ի Հ Ե Տ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Ժիրայր Նայիրին ծնած է 1929-թ.ին Լիբանանի Ճիպէյլ
ֆաղաֆ: Այստեղ կը գտնուէր յետ եղեռնեան առաջին հայ-
կական որբանոցը:

Իր ծնողները՝ Սեդրակ ու Արուսեակ, երկուքն ալ հա-
նրնցի, եղեռնէն փրկուած՝ վերապրողներ, 1924 թ.ին եկած
հաստատուած են Լիբանան ու եղած Քելէկեան որբանոցի
մօտիկ բնակիչներ: Այստեղ Սեդրակ Թօսունեանը Աւագ
ուսուցիչ է որբանոցին մէջ: Հետագային ազգին ծառայելու
կոչոււմը ունենալուն Ազունիէի Ազգային բուժարանի պա-
տասխանատու վարչականներէն մէկը կը դառնայ: Ազու-
նիէի Ազգային բուժարանի վայրի ընտրանքը իր առաջար-
կութեամբ եղած է: Երբ Համմանացիները մերժած են
«մահացու հիւանդութեան» մը դարմանումին ծառայելիք
հաստատութեան մը գոյութիւնը իրենց տարածքին վրայ:

Աւելի կանուխ՝ 1919թ.ներուն, Տէր-Ջօրի ու Միջագետ-
քի շրջանին մէջ, հայր Սեդրակ ծառայած է Անգլիական
բանակին որպէս թարգմանիչ:

Բուժարանը, որ թոճատապէ տառապողներու համար էր,
սկիզբը կ'ուզեն հաստատել Համմանայի մէջ: Տեղի գիւղա-
ցիները կ'ընդդիմանան: Թոճախտը վարակիչ հիւանդութիւն
էր: Ուրեմն Սեդրակ Թօսունեան յարմար կը նկատէ Ազու-
նիէն իրր բուժարանի վայր: Այդ տարիներուն Գիտնական
Քոխը տակաւին չէր գտած թոճախտի մանրէները անվնաս
դարձնելու կերպը և ոչ ալ բենիսելինը ստեղծուած էր:

Ազունիէի Շէյխին կը համոզեն, որ հայոց հիմնելիք բու-
ժարանը կրնայ օգտակար ըլլալ գիւղի բնակիչներուն: Հի-
ւանդանոցին կառուցումը կրնայ տեւել երկու տարի: Ուրեմն,
հոն որոշ թիւով գիւղացիք կրնային աշխատանք գտնել և

Հ Ա Ն Դ Ի Պ ՈՒ Մ Վ Ա Ս Տ Ա Կ Ա Ի ՈՐ Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Գ Ի Ր -
Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Գ ՈՐ Ծ Ի Չ Ժ Ի Ր Ա Յ Ր Ն Ա Յ Ի Ր Ի Ի Հ Ե Տ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

ումանք ալ այնուհետեւ հոն կրնային ըլլալ պաշտօնեայ ու գործաւոր: Տակաւին կար խոստումը՝ գիւղացիք հիւանդ ըլլալու պարագային կրնային անվարձ բուժուիլ: Այսպէս, հայերը կ'ունենան իրենց Ազգային Բուժարանը այնտեղ:

Օդը չոր է Ազունիէի մէջ: Շրջանը նոնեստաններով հարուստ: Ուրեմն հոս է, որ կը կառուցուի բուժարանը որուն հաստատման համար նիւթապէս ու բարոյապէս կ'օժանդակէ Դանիացի Փափա Քիւնցլէր, յայտնի որբախնամը: Դանիացիք մարդասիրաբար կ'օժանդակեն հիւանդանոցին:

Պատմութիւնը հետաքրքրական էր: Հայը եկեղեցիէն ու դպրոցէն ետք, հիւանդանոց ալ կը հիմնէր:

Հարցումիս պատասխանելով՝ ժիրայր կը շարունակէ. — Ծնողներս ունեցան չորս զաւակ, — կ'ըսէ Նայիրին, — առաջինը՝ աղջիկ, միւսները՝ երեք մանչ: Կը նկատեմ, որ թախիծ մը կ'ուրուագծուի դէմքին.

Քոյրս՝ Եւփիմէն *մենէնհիթէ* տառապելուն, 16 տարեկանին մահացաւ: Մեր երէցն էր: Մահը մօտէն նանչցանք: Սուգը պատեց մեր ընտանիքը: Մինչեւ այսօր, շատ տանամեակներ ետք, աչքէս չերթար քոջս տառապանքը: Նոպայի վայրկեաններուն կը գալարուէր սենեակին յատակին վրայ: Խալիլ Պետելիի Ս. Յարութիւն եկեղեցիէն տարինք քոյրս ու թաղեցինք:

– Հապա ձեր ուսումը:

– Նոյն եկեղեցիին կից եղող Ռուբինեան Ազգ. վարժարանին կը պարտիմ նախնական ուսումս Պրն Արտաշէսի [«Շատրա»] տեսչութեան օրերուն: Իսկ երկրորդականը Ազգային Սահակեան վարժարանին երբ դպրոցը դարձած էր ութնամեայ Բենիամին ժամկոչեան մանկավարժի տնօրէնութեան ժամանակ: 1944-45 ուսումնական տարիին ➡

աւարտեցի այս լիսէն: Տնօրէնը կը սիրէր Լիսէ անուանել այս դպրոցը:

– Ապա շարունակեցի՞ք ուսանիլ:

– Անշուշտ: Հայ գրականութիւնն ու մշակոյթը սիրելու և ազգիս ծառայելու կոչում գգալուս, կուգայի Հնչակեան ընտանիքէ, որով ձգտեցայ հայագիտութեան ու դարձայ աշակերտ Պէյրութի հայկ. Ճեմարանին որ յետոյ Նշան Փալանեան նեմարան կոչուեցաւ: Այդ օրերուն նեմարանի տնօրէնութիւնը կը վարէր Լեւոն Շանթ գրագէտը:

Հոս որպէս ուսուցիչներ ունեցայ Կարօ Սասունին, Մուշեղ Իշխանն ու Նիկոլ Աղբալեանը:

– Ուրեմն աւարտեցի՞ր Ճեմարանը:

– Ոչ: Այդ օրերուն գաղութը Եռեւեփումի մէջ էր: Կային կուսակցական պայքարներ: Աւանդաբար ապրած ըլլալով հայրենասէր ընտանիքի մէջ, Հնչակեան շրջանակի անդամ, դուրս եկայ Ճեմարանէն թերաւարտ: Պակասը լրացուցի ինքնաշխատութեամբ:

– Ո՞ր ասպարէզը ընտրեցիք:

– 1952-53 տարեշրջանէն սկսեալ միացայ «Արարատ» օրաթերթի անձնակազմին, սկիզբը որպէս թարգմանիչ [ֆրանսերէն լուրերու] ապա եղայ օգնական խմբագիր, հուսկ՝ գլխաւոր խմբագիր ու պատասխանատու խմբագիր-տնօրէն յաջա Լիբանանի Տեղեկատուութեան նախարարութեան:

Կամֆէ անկախ պատճառներով, ի հեճուկս կամֆիս՝ դուրս դրուեցայ իմ սիրած թերթի խմբագիր-տնօրէնի պաշտօնէս զանազան պատրուակներով և սկսայ հրատարակել սեփական թերթս՝ «Նայիրի»ն, միշտ հաւատարիմ մնալով՝ Հնչակեան Ընկերվարական գաղափարախօսութեան: Այդպէս ալ կը մնամ մինչեւ օրս:

Այդ՝ Մարտի ու Էնկէլսի գաղափարախօսութիւնն է: Ժան Ժորէսի տեսլականը: Թոլսթոյի բարոյականութիւնը: Ֆիւչիքի հայրենասիրական նուիրումը:

«Արարատ» օրաթերթի հրատարակութեան անձնակազմին մէջ մնացի 1952-1995 թուականներուն: Ուրեմն շուրջ 43 տարի նուիրուած մնացի խմբագիրի աշխատանքներուս

ամէն օր թարգմանելով ու խմբագրական կամ առաջնորդող յօդուած մը հրատարակելով: Այդ բոլորը եթէ վերածուին գիրքերու, կարելի է ունենալ տասնեակ հատորէ աւելին: Ժամանակի օրէ օր տրուող մեր գաղութին պատմութիւնն է այդ: Նեոարեալ այդ տարիներու ազգային քաղաքական կեանքի և եղելութեանց պատմութիւնը:

Այս ընթացքին մաս կազմեցի նաեւ «Արարատ Գրական» պարբերաթերթի խմբագրութեան:

«Արարատ» օրաթերթի խմբագիրի պաշտօնէս դուրս գալէս ետք, տարիներ շարունակ, թերթին մէջ նշուած մնաց պատասխանատու տնօրէն ըլլալուս հանգամանքը, քանի որ, ըստ Լիբանանի Մամուլի պետական օրէնքին, ոեւէ անձ թերթի տնօրէն կրնայ դառնալ եթէ պաշտօնապէս իր անունը գրանձուած է Լիբանանի տեղեկատուական նախարարութեան մօտ իբր լրագրող կամ խմբագիր:

«Արարատ» օրաթերթի շրջանակին մէջ այս պայմանը լրացնող անձեր չկային: Ուստի, շուրջ ութ տարի, թերթէն բաժնուելէս ետք, անունս նշուած մնաց որպէս պատասխանատու տնօրէն: Եւ ես չառարկեցի: Իմ թերթս էր ի վերջոյ... կրնայի՞ վնասել անոր:

Անցայ «Նայիրի» թերթի խմբագրումին:

Լիբանանեան մամուլոյ օրէնքով, լրագրողի պաշտօնական հանգամանք ունեցող մը միաժամանակ կրնայ երկու թերթի պատասխանատուութիւնը ու տնօրէնութիւնը վարել: Բայց այդ օրերու կուսակցական պատասխանատուներ համաձայն չըլլալով իմ տնօրէնի անուանս թերթի մէջ նշուած մնալուն, անոր տեղ դրին անունը՝ Հրանդ Գանգրունիին, որ շատ տարիներ առաջ կեանքէ հեռացած էր այլեւս:

Այս մեկը նկատող չեղաւ, ես ալ իմ կողմէ չառարկեցի: Կրնայի՞ վնասել ես իմ թերթին որուն ծառայած էի տասնեակ ու տասնեակ տարիներ:

«Արարատ»եան օրերուս հրատարակեցի նաեւ գիրքեր.—

Ա.— «Հայրենի Կտուրի տակ»-տպաւորութիւններ:

Բ.— «Հայուն Արեւմուտը»:

Գ.— «Յիսնամեակ վերածննդեան և փառքի»:

Դ.— «Ս.Դ.Հնչակեան Կուսակցութիւնը եւ Հայկական Հոդային Դատը»- որուն տարբերակը լոյս տեսաւ Սպաներէն լեզուով, Արժանթինի Պուէնոս Այրէս քաղաքին մէջ 1969 թուականին, 10,000 տպաքանակով: Անոր մէջ հայկական պահանջատիրութեան տարածքային իրաւունքը կը շեշտուէր:

Կընդմիջեմ խմբագիրին խօսքը ըսելով.— Այդ օրերուն, լաւ կը յիշեմ, ձեր մէկ յօդուածաշարքը գոր անուանած էիք «Թաթերը վար՝ Եգիպտոսի Առջեւ»-ը որ կը ձաղկէր Արեւմրտեան տէրութիւններու «Երբեակ յարձակում»ը ազատատենչ եգիպտոսի վրայ: Ֆրանսա, Անգլիա ու Իսրայէլ-չէին ներած Սուէզի Ջրանցքին ազգայնացումը Նախ. Ապտել Նասերի կողմէ:

- Լա՛ւ յիշեցիք՝ Խորհրդային Միութիւնն ալ վերջնագիր տուաւ անոնց:

- Այո՛, այո, վերջնագիր տուաւ: Զայն մը՝ որ եղաւ լսելի՛: Յետո՞յ: -Յետոյ այն, որ 1995-96թ.ին սկսայ հրատարակել «Նայիրի»ն:

Այս թերթին արտօնութիւնը կը պատկանէր ողբացեալ գրագէտ ու ներհուն հրապարակագիր՝ Անդրանիկ Ծառուկեանին, որուն կնոջմէն՝ Տիկ. Սոնայէն գնեցի արտօնագիրը բարեկամի մը օգնութեամբ՝ յանձինս Վարդիվառ Տէր Գալուստեանի, որ այդ ժամանակ երեւելի մէկ անդամն էր Սին էլ Ֆիլի քաղաքապետական խորհուրդին:

Վարդիվառը մեծ աշխատանք տարաւ Հայ-Արար-Լիբանանեան բարեկամութիւնը ամբապնդելու-սերտացնելու գծով:

Իսկ Տիկ. Ս. Ծառուկեանը գոհ էր արտօնագիրը ինձի վանառելով: «Անդրանիկէն յետոյ գոնէ արժանաւորի մը կը վստահուի «Նայիրի»ի արտօնագիրը»-ըսաւ ան:

1973 տարեթիւին, երբ Հայաստանի «Արարատ»ը «Կըրկնակի ախոյեան» դարձաւ նուանելով ախոյեանի տիտղոսու բաժակ, Վարդիվառ Տէր Գալուստեանի նախաձեռնութեամբ Սին-էլ-Ֆիլի ֆաղաֆապետութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ խորհուրդի նախագահ Հապիպ Հաֆիմի, այցելեցին Հայաստան եւ Ախոյեան կազմը շնորհաւորելով պարգեւատրեց խումբին անդամներն ու պատասխանատուները ոսկեմետալներով:

Վարդիվառը մարդասիրական շնորհակալ ծառայութիւն մատուցանեց նաեւ Լիբանանի ֆաղաֆացիական կոիւնքրու տարիներուն: Անձամբ կ'այցելէր Սին-էլ Ֆիլի և ասոր մօտակայ թաղերու հայ բնակիչներուն և սննդանիւթ-պարէն կը բաժնէր անոնց: Նոյնը ընել յանձնարարելով ուրիշ բարեսիրական միութիւններուն ղեկավարներուն:

Ու հիմա, երբ 1995-96էն ի վեր եւ մինչեւ այսօր կը շարունակեմ հրատարակել իմ «Նայիրի»ս կողմիս ունենալով գլխաւոր աշխատակիցս՝ կեանքիս ընկերուի Տիկին Մարին: Բժիշկ տղաս՝ Յակոբը կ'օգնէ ինձի:

Բացառիկ օժանդակութիւնը կը վայելեմ նաեւ կորովի հրապարակագիր Յովհաննէս Զիլիկկիրեանին՝ Նիս ֆաղաֆէն, նաեւ ժընեւէն՝ Նազարէթ Սրմաֆէշլեանին որոնք կ'աշխատակցին ալ թերթիս իրենց ֆաղաֆական բովանդակալից յօդուածներով: Մանաւանդ՝ Ռուբէն Սեւակատիպ Զիլիկկիրեան Յովհաննէսը որ տեսլապաշտ մըն է:

Ահա՛ թէ ինչու, կը շարունակեմ նուիրուած մնալ հայ մամուլի շնորհակալ գործին, ճշմարիտին ծառայելու երդումով:



Երդումնադրուծ պիտի չըլլամ: Պիտի տեւականացնեմ՝ «Նայիրի»ն, այսինքն իմ Հայաստանս: Քանի շունչ կայ վրաս-կ'եզրակացնէ ժիրայր: Այս խօսքը կը հնչէ վերանորոգ երդումի մը պէս:

Ժիրայր Նայիրի գրող-հրապարակագիրը իր բազմամեայ նուիրումի ընթացքին արժանացած է պատուանշաններու, պատուոգրերու, շքանշաններու և բազմաթիւ ընթերցողներու բարձր գնահատանքին, նիւթապէս և բարոյապէս, այլապէս կը կարծէ՞ք թէ դիւրին կ'ըլլար ամբողջ քսան տարի պահել շաբաթաթերթ մը ի հենուկս բազմաթիւ խոչնդոտներու:

«Ես շնորհակալ եմ, կ'ըսէ խմբագիրը», շնորհակալ եմ աշխատակիցներուս, ինձի օժանդակողներուն, յատկապէս շատ սիրելի բարեկամիս՝ Նիսարնակ (Ֆրանսա) Յովհաննէս Զիլինկիրեանին, և նոյնքան թանկագին հայրենակիցիս՝ Նազարէթ Սրմաբէշեան (Ժընեւարնակ) բարեմոյն բարեկամիս, որ իրենց յառաջացած տարիքին անգամ հայ գիրին մեծ նուիրեալները կը մնան:

– Շնորհակալութեամբ ու անեռախտամոռ զգացումներով համակուած եմ հանդէպ Սփիւռքի տարբեր գաղթօճախներու յարգարժան ազգայիններուն որոնք օգնած են ինձի կամովին:

Անոնք մշտապէս ու մեծ բարեհոգութեամբ իրենց թանկագին նեցուկը չզլացան ու կը շարունակեն ընծայել ինձի

մշտապէս մեծ բարեացակամութեամբ: Եւ կրկնապէս արժանի են որ... բարի օրինակ ծառայեն ուրիշներուն և ... յօգուտ հայ Տիպ ու Տառին, Հայ Մշակոյթին ու Հայապահպանումին:

– Բայց չխօսեցաք ձեր ընտանիքին մասին.– զուակներուդ ու թոռներուդ:

Նայիրի խօսեցաւ շատ հպանցիկ այդ մասին եւս: Աւելին ըսելը անհամեստութիւն նկատեց:

– Իմ կողմէ յայտնեմ այդ մասին.– Նայիրին ընտանիք կազմած է Մարի Թիւթիւնեանի հետ որ եղած է ու կը մնայ իր լաւագոյն օգնականն ու կեանքի ընկերը, որուն հետ ապրած են տաք ու պաղ շատ օրեր: Բայց միշտ անսասան միութեամբ, համերաշխ ու իրար ամբողջացնելով: Ունեցած են երկու դուստր և մէկ մանչ, վերջինը բժիշկ վկայուած է Երեւանէն: Դուստրերէն մէկը ծանօթ առեւտրական է: Երկրորդը կը պաշտօնավարէ ԱՄՆ-ի հանրահայտ առեւտրական հիմնարկներէն մէկուն մէջ:

Այսպէս... աւարտին հասաւ մեր այդ օրուան հանդիպումը:

Թող «Նայիրի»ին երթը շարունակուի ժիրայր Նայիրիով:

Նուիրումը սահման չունի երդուեալներուն համար:

«Վերջին բոպէին գրիչս մատներուս մէջ սեղմուած պիտի ըլլայ ու մնայ անբաժան ու յաւետ...» – կ'ըսէ կէս կատակով, հայ ժամանակակից Մամուլի Արժանաւոր Քրմապետը: